6. ՕՂՈՐՄԱՑՈՂ

Ժամանակոց մե թագավոր կ'էղնի։ Իրեք տղա կ'ունենա։

Տղոցը թուի կէնա, ըղոնց փող կուտա.

— Աշենք վե՞րդ շատ կաշխատիք, արվեստություն կէնեք։

Փարեն տալեն վերշը էն էրկու տրղեն փարա կը վաստրկին։ Պզտիկ տրղեն էլ կառնի ու էդ փարեն աղքատաց կը ցրվի։

Գարրել հրեշտակը ճամփու վըրեն նըստած կէղնի, կէրթա տղեն էն Գարրել հրեշտակին կըսե.

— Պարև քեզի, ամի[1]։

Էն կըսե.— Աստծու պարին Շահ-զատե։

Կըսե.— Դու ի՞նչ գիտես օր ես թագավորի տղա եմ։

Կըսե թե.— Ես ի՞նչըխ չիտեմ։ Դու պըտի էրթաս այսինչ քաղաքը, մե հիվընդի մոտ միսաֆիր էղնիս, ես պիտի գամ, էն գարշելու հոդին հանեմ։

Ըդ թագավորի տըղեն կէրթա կը, էդ գարշելի հիվընդի դուռ, էդոր ախպըրտանք գելնին չեն թողու էդ միսաֆիրին նե էրթալու։ Էդ մարթ ընոնց անկաչ չի էնե, զոռաքի մտնի կը նե։

Մութը կէղնի քիմի, ճըրագը կըպի, Գարրել հրեշտակը էնոր ետևեն կէրթա, մտնի կը նե, չարչըրելով էդ հիվընդի հոգին կառնե կը ու գելնի ու կէրթա։

Էս էլ, լուսանա, գելնի, ձին կհեծնի ու դեմի ուր հոր քաղաք

[1] Հորեղբայր (Ս. Բ.)։

կէրթա։ Կէրթա օր Գարրել հրեշտակը իրեն ճամփու վրեն նստած կէղնի, էլի մե փիր-ըխտիարըմ։

Կէրթա էդոր բարև կուտա։

— Աստծու պարին թագավորի տղա։

Կըսե.— Դու իմ թագավորի տղա էլնելս, ամի, ի՞նչ գիտնաս։

Կըսե.— Ես ի՞նչըխ չը գիտենամ, ես Գաբրել հրեշտակն եմ։ Ընձի դու չը տեսա՞ր, ես էկա էն անգութ, անխիղճ, հիվընդի հոգին առա։

Կ'ըսե թե.— Ի՞նչըխ առար, օր ես չը տեսա։

Կ'ըսե.— Հիմի գուզե՞ս, էնոր հոգին տեսնիս։

— Այո,— կըսե,— գուզե՞մ։

Ըսմա բուռը բանա, կըսե.— Ան, էն բըռիս մեջն է։

Ինչըխ օր մե գեշ, կաթրածի պես մե սև բան մէ։

Էդի դուքա, գելլե հորը տուն։ Ըդ դրռան մշակ կա։ Թագավոր մըշկին կըսե։— Գնա, ըսե թե, փարեն ի՞նչըխ արիր, ի՞նչ աշխատար։

Կըսե.— Հեչ, ի՞նչ պիտի աշխատիմ, էն փարան ես տարա հուխարի քուլլի ցըրվեցի։

Կըսե թե.— Հիմի ի՞նչ գուղես թագավորեն։

— Մե հապիկե օսկի թոխ տա, էս հախ հյուսիսի սամթ պիտի էրթամ։

Թագավոր կըսե.— Էդիկ մե թագավորություն պիտի վերջացնե, էդիկ փարա չի բըռնե, հապիկեմ օսկի տըվեք, աշենք ի՞նչ պիտի էնե էսիկ։

Էդ մարթը գելնե կ'էրթա հյուսիսի կողմը, օր թե հուխարին ցըրվե։ Ցըրվելեն, ցըրվելեն կէրթա։

Ճանապարհի վըրեն Գարրել հրեշտակ նստուկ կէղնի, ամա էս հախ ուրիշ կըբալ[1] կէղնի։

Գուքա, կըսե.— Բարև։

Կըսե թե.— Դու պիտի էրթաս Ծաղան (դեղ մե Բասենի մեջ). քու էրթած տեղը մեկ հիվանդ կա, ես պիտի գամ էն խըղճով, էն օղորմութենով, էն լավ մարթու հոգին պըտի առնիմ։

Կէրթա էդ հիվընդի դուռը, հիվընդի ախպըրտանքը դուռը կէղնին։

— Բարի իրիկուն,— կըսե ըդոնցը։

---

[1] Զև, տեսակ (Ծ. Ռ.)։

— Օ, աստծու բարին,— կըսեն,— բարով էկար, աստծու բարին, դու մեր աղիգի, մեր գլխուն տեղ ունիս։

Մարթու ձին նե կը քաշեն, բերին էղոր տակը դոշակ ձրգեցին, եմադ, բաներ բերին, կերան։

Գարրել հրեշտակ էկավ, սահթվանեմ ետև, էդու հոգին առավ։

Էգոր ախպըրտանք էկան էդ մսաֆըրին ըսին թե.— Սիրտըդ չառնի, չ՝ըսես թե, մըսաֆըրի օտքը վըրեն չէկավ. էս մարթ մեռավ։ Մեր ախպոր ումպր էսքան էր տվեր, աստված առավ։

Քընան, լուսացավ։ Ելան էդ թագավորի տըղի ձին դուս քաշեցին, հեծավ, դեմը էկավ հորը քաղաք։ էկավ, էն ճամփու վրեն Գարրել հրեշտակը նստած կէղնի։

— Բարև,— կըսե,— ախպեր։

— Ասսու պարին, թագավորի տղա։

— Դու իմ թագավորի տղա էլնելը ի՞նչ գիտնաս։

Կըսե թե.— Ես ի՞նչըխ չը գիտնամ, ես էկ·ս էն խղճով մարթու հոգին առա, գուղե՞ս օր տեսնես։

— Այո,— կըսե,— գուղե՞մ։

Բանա օր, ինչըխ օր բյուլբյուլը ըռունդ, պոծառ, իր բըռի մեշ։

Նորեն էկավ դեմի հորը քաղաք, իշավ հորը տուն։

Թագավոր դիմանա։ Դըռան մարթուն կըսե.

— Գնա աշե, թե թագավորի աղեն ի՞նչ է արե փարեն, վաստակ էրե՞ր է։

Կըսե թե.— Ես վաստակ չեմ էրե։ Թող մե հապիկեմ օսկի թագավորըս տա, էս դինուշ հարաֆի կողմը պիտ էրթամ։

Էդ մարթուն կըսե թագավոր.— Հապիկեմ օսկի կենա տըվեք, աշենք թե էս դինուշ ի՞նչ պիտի ընե։

Ձիու թարքին կը ղարկե մե հապիկե օսկի գելի կէրթա հարաֆի կողմը։

Էդ մարթ, էդ փարեն աղքատի ցըրվելեն, ցըրվելեն կէրթա, կէրթա կը տեսնա ճամփու վըրեն, օր մե յարալի, իսնե կերպաց ելած, յարալու, փարալու մե աղչիկըմ նստած էր։

Ձեռք էրկընցուց, ըսաց.— Ա՞յ մարթ, ընձի մե օղորմություն տուր։

Ըսաց.— Այ աղչիկ, փարես ցրվեր եմ աղքատաց, չկա, արի ձիս տամ, տար ծախե, քեղի փարա էրա։

Կըսե.— Վըրես կծիծաղես։

Կրսե.— Չեմ ծիծաղի, թե էն էլ չես առնի, էդե վրեշիս հալավը տամ։

Կրսե.— Հերիք վրրես ծիծաղես, ա՜յ տղա։

Տրղեն կրսե.— Ձիս տրվի չառար, հալավրս տրվի չառար, վրրես փարա չունիմ, էկե ղու ընձի առ, քեղի տանիմ։

Աղջիկ ինք ուր կրսե.— Ես յարալի, փարալի, էսիկ ընձի զավզ կէնե։

Կրսե.— Ջանըմ, հերիք ընձի զավզ էնես, ես յարալի, ղու ընձիկ առնողը չէս։

— Ձէ,— կրսե,— վալլահ կառնեմ։

Էդ աղջիկ իրեն մտքեն կրսե.— Տո, ջանըմ, կէրթամ։ Թե առա՜վ, ղաթի առավ, թե չառավ իսե տեղոց տեղը կը մնամ։

Հըմը թագավորի մանչ բիլեկեն կը պռնե, կառնի թերքին, կէրթա թագավորի տան դեմես դեմը, իրան հ'օդեն կը նստի։

Թագավոր իրեն մարթուն կրսե թե.— Մեր ջահզադեն էկավ, գնա աչե, թե ի՞նչ էրավ։

Մարթը կէրթա օր դուռը փակուկ է։

Կրսե.— Թագավորի տղա, դուռը բաց։

Կրսե թե.— Էդ վո՞վ էկեր է էդտեղ, ես իմ սրտի սիրական առեր եմ, նստեր եմ։

Ծակեն կաչե էդ դրռան մարթը, որ մե իսնե կերպաց հ'ելուկ, յարալի աղջիկըմ առե փաթըթու նստեր է։

Կէրթա թագավորի մոտ։ Թագավոր կը հարցու.

— Ըսե, տեսնամ, ի՞նչ տեսար։

— Ի՞նչ ըսեմ, ըսելու բան չէ։

— Ինչրխ է որ։

— Ջանըմ, մե յարալի, փարալի աղջիկմ' առեր նստեր է. կասե թե. «Իմ սրտի սիրական է»։

Թագավոր ինքն իրեն հերսի դուքա թե.— Ջալլադը բերեք, էդ տրղի ճիտը զարկեմ, էդ տրղեն մեզի պետք չէ։

Կէրթան մորը կրսեն.— Ձես ըսեր թե թագավոր ղազաբի էկեր է։ Կրսե թե տղիդ վիզը պիտի զարկենք։

Մերը կ'ելի կ'էրթա տղի հօդայի դուռը։

Կ'ըսե.— Շահզադա, ղուրբան, դուռը բաց նե գամ։

Կրսե.— Մայրի՛կ, ես իմ սրտի սիրական առե նստեր եմ։

Դառնա ուր կնգան կրսե.— Աղջիկ, ելի դուռը բաց։

Գուքա աղջիկը դուռը բանա կը։

Մայրը կրսե.— Օղուլ, դու էս ի՞նչ է առեր ես։

Կրսե.— Մայրի՛կ, իմ սրտի սիրականն է։

Էդման օր կրսե, ասսու հրամանքով պրթկա կը, մուխը կոխե կը

հոդեն, էդ աղջիկ էդ յարեչեն, փարեչեն կը խալսի գը։ Կէղնի մե աղջիկ՝ որ աշխար հեչ քալած չէ, էնքան որ ըռունդ կէղնի։

Էդ թագավորի կնիկը կ'էրթա թագավորի քով, կըսե.

— Դու աստծու հերե՞սեն ես ընդե, որ աստվածութենը քեզ էդման հարս է տվե։

— Կնիկ, ի՞նչ կ'ըսես։

— Հա՜,— կըսե,— չես ավտա, քելե տեսնենք։

Գելնեն թագավոր ու իրեն կնիկ դուքան էդ տղի քով։ Թագավոր նե կը մտնե, տեսնա մե հյուրի մելեք հարսըմ։ Կէրթա, հարսի, մանչու աշները կը պադնե, նոր իր մանչու հարսնիքը կը ռռնե գը։

Օխտը դավըլ, օխտը զուռնա կը բերե, օխտը գիշեր, օխտը ցերեկ հարսնիք ռռնե գը։